

### **Հարց**

**Եկամտային հարկով հարկման առումով ինչպե՞ս են վերահաշվարկվում արտարժույթով ստացված եկամուտները:**

### **Պատասխան**

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձանց կողմից արտարժույթով ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) եկամուտները վերահաշվարկվում են ՀՀ դրամով՝ ելնելով դրանց ստացման իրավունքի ձեռքբերման օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից:

### **Հարց**

**Հարկային գործակալը ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս ի՞նչ դրույքաչափով է հաշվարկում եկամտային հարկը գրավոր պայմանագիր չկնքելու դեպքում:**

### **Պատասխան**

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված ձևով գրավոր պայմանագիր չկնքելու կամ ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիրը (անձնագրի տվյալների և ԼՂՀ-ում բնակության (հաշվառման) հասցեի պարտադիր նշումով) չկնքելու դեպքում հարկային գործակալը ֆիզիկական անձին եկամուտներ վճարելիս (բացառությամբ՝ աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման դիմաց եկամուտներ վճարելիս) եկամտային հարկը հաշվարկում և պահում է 10 տոկոս դրույքաչափով՝ վճարված եկամուտների նկատմամբ՝ առանց հաշվի առնելու նույն օրենքով սահմանված նվազեցումները:

### **Հարց**

**Պարտադիր է, արդյոք, ՀԴՄ-ի կիրառումը մարդապար-տաքսի ավտոմոբիլներով փոխադրումներ իրականացնելիս:**

### **Պատասխան**

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ավտոմոբիլային տրանսպորտով կատարվող ուղևորափոխադրումների իրականացման և երթևեկության տոմսերի վաճառքի գործունեության մասով կանխիկ դրամով դրամական հաշվարկներ կատարելիս կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր չէ:

### **Հարց**

**Առևտրի օբյեկտի կամ ծառայության մատուցման վայրի ո՞ր հատվածում է տեղադրվում ՀԴՄ-ն:**

### **Պատասխան**

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հսկիչ-դրամարկղային մեքենան տեղադրվում է առևտրի օբյեկտի կամ ծառայության մատուցման վայրի այն հատվածում, որտեղ կատարվում է վճարումը:

### **Հարց**

**Պարտադիր է, արդյոք, ՀԴՄ-ի կիրառումը փաստաբանական ծառայություններ մատուցելիս:**

### **Պատասխան**

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանական ծառայությունների մատուցման մասով կանխիկ դրամով դրամական հաշվարկներ կատարելիս կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր չէ:

### **Հարց**

**Քանկից ստացված կանխիկ դրամը ե՞րբ պետք է մուտքագրվի կազմակերպության դրամարկղ:**

### **Պատասխան**

«Դրամարկղային գործառնությունների մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ երբ քանկից ստացված կանխիկ դրամը ենթակա է մուտքագրման կազմակերպության դրամարկղ, մուտքագրումը պետք է կատարվի առնվազն կանխիկ դրամը քանկային հաշվից հանելու հաջորդ օրը:

### **Հարց**

**Դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողները ի՞նչ ժամկետում կարող են հարկային մարմին վերադարձնել ձեռք բերված և չօգտագործված դրոշմապիտակները:**

### **Պատասխան**

«Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի 9.7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողների կողմից ձեռք բերված և չօգտագործված դրոշմապիտակները վերադարձվում են հարկային մարմին՝ համապատասխան արտադրությունը դադարեցնելու ամսվան հաջորդող եռամսյա ժամկետում: